

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

1.1.1. 2004թ. հունվարի ՀՆԱ-ի ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը, ընթացիկ գներով, 2004թ. հունվարին կազմել է 61100.7 մլն.դրամ և աճի տեմպը 2003թ. հունվարի համեմատությամբ կազմել է 104.4% (2003թ. հունվարի ցուցանիշը 2002թ. հունվարի նկատմամբ կազմել է 110.6%):

ՀՆԱ-ի 4.4 տոկոսային կետով աճին ամենաշատը նպաստել են ապրանքների զուտ հարկերը (4.1 տոկոսային կետ):

2004թ. հունվարին տնտեսության 5 բազային ճյուղերում արձանագրվել է ավելացված արժեքի արտադրության 1.8%-ով նվազում: Դրա հետ մեկտեղ, ՀՆԱ-ի կառուցվածքում այդ ճյուղերի տեսակարար կշիռը 2003թ. հունվարի համեմատությամբ նվազել է 2.9 տոկոսային կետով, իսկ ապրանքների զուտ հարկերի ցուցանիշն աճել է 3.3 տոկոսային կետով:

ՀՆԱ-ի արտադրությունը տնտեսության հիմնական բազային ճյուղերում

(%)

	Աճի տեմպը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատ- վածի նկատմամբ		ՀՆԱ-ի հավելածի կազմը		ՀՆԱ-ի կառուցվածքն ընդամենի նկատմամբ	
	հունվար					
	2003	2004	2003	2004	2003	2004
<i>ՀՆԱ-ն հիմնական գներով</i>	112.4	100.3	10.4	0.3	85.3	82.0
<i>որից ճյուղեր`</i>						
արդյունաբերություն	109.9	91.4	3.1	-2.7	31.3	31.7
գյուղատնտեսություն	106.0	104.3	0.8	0.5	12.4	11.1
շինարարություն	195.3	74.2	2.9	-1.3	5.1	3.3
տրանսպորտ և կապ	120.6	109.3	1.2	0.6	6.7	6.5
առևտուր և հանրային սնունդ	109.8	109.7	1.6	1.6	16.1	16.1
Ընդամենը, բազային ճյուղեր	113.7	98.2	9.5	-1.3	71.6	68.7
Ընդամենը, այլ ճյուղեր	105.9	111.3	0.9	1.6	13.7	13.3
Ապրանքների զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	101.2	128.0	0.2	4.1	14.7	18.0
<i>ՀՆԱ-ն շուկայական գներով</i>	110.6	104.4	10.6	4.4	100.0	100.0

Արտադրված ՀՆԱ-ի կառուցվածքը

(ընդամենի նկատմամբ, %)

	Հունվար	
	2003	2004
<i>ՀՆԱ-ն շուկայական գներով</i>	100	100
<i>այդ թվում`</i>		
ապրանքներ	49.8	46.2
ծառայություններ	35.5	35.8
ապրանքների զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	14.7	18.0